

Հանրապետություն

Վերջին օրվա համար

Հանրապետության վարչապետի կողմից հաստատված

Տրամադրության միջոցով հաստատված կարգը

Դրամական միջոցներ ունեցող անհատների հարկումներ

«Արինտերլ» ՓԲԸ

Մեծահասակների հարկերի վերաբերյալ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված
տարվա վերաբերյալ

Հաստատված հարկերի վերաբերյալ կարգը

Հանրապետության վարչապետի կողմից հաստատված

Վարչապետի հրամանով

Հանրապետության վարչապետի կողմից

Կրթության նախարարի հրամանով

Հանրապետության վարչապետի կողմից

Հանրապետության վարչապետի հրամանով

Հանրապետության վարչապետի կողմից
հաստատված կարգը

Կրթության նախարարի հրամանով

Հանրապետության վարչապետի կողմից

Բովանդակություն

- 3 Անկախ աուդիտորի եզրակացություն
- 6 Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
- 7 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
- 8 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
- 9 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
- 10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
- 11 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընկերության գտնվելու վայրը՝

Հայաստանի Հանրապետություն

Իրավական ձևը՝

Փակ բաժնետիրական ընկերություն

Հիմնական գործունեության նկարագիրը՝

Ընկերության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում

Գլխավոր տնօրեն՝



Հարություն Մանգոյան

Անկախ աուդիտորի եզրակացություն

Ներկայացվում է «Արինտերլև» ՓԲԸ ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արինտերլև» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՓՄԿ-ների ՖՀՄՄ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ Անկախության միջազգային ստանդարտները)» (ՀԷՄՄՆ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները համաձայն ՀՄԷՄՆ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության՝ անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել նրա գործունեությունը կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հնկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկլարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք դեկլարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հնկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հնկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Եսախանյան, FCCA
Տնօրեն



Սերգեյ Յակովլև, FCCA
Առաջադրանքի ղեկավար

9 հոկտեմբերի 2023թ.

ք.Երևան



«Արինտերլև» ՓԲԸ
 Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Մլթ.	2022թ. հազ.դրամ	2021թ. հազ.դրամ
Հասույթ	5	2,667,386	2,821,005
Ինքնարժեք	6	(1,628,760)	(1,562,008)
Համախառն շահույթ		1,038,626	1,258,997
Վարչական ծախսեր	6	(613,027)	(449,556)
Բրաջման ծախսեր	6	(44,985)	(43,740)
Այլ եկամուտ		6,870	10,487
Այլ ծախսեր	6	(77,204)	(32,737)
Գործառնական շահույթ		310,280	743,451
Ֆինանսական եկամուտ		20,172	3,105
Ֆինանսական ծախսեր		(16,041)	(11,645)
Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ/(կորուստ)		34,077	(769)
Շահույթ մինչև հարկումը		348,488	734,142
Շահութահարկի զծով ծախս	7	(68,398)	(135,949)
Տարվա զուտ շահույթ		280,090	598,193
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		280,090	598,193

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Հնկերության ղեկավարության կողմից 2023թ. հոկտեմբերի 9-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները ներկայացված 11-33 էջերում, կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հարություն Մանգոյան
 Գլխավոր տնօրեն



Արնիկ Մխիթարյան
 Ֆինանսական տնօրեն

«Արինտերլե» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Մնթ.	2022թ. հազ.դրամ	2021թ. հազ.դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ	8	91,958	56,543
Բանկային ավանդներ	9	174,073	60,697
Փոխառություններ		878	43,557
Պաշարներ	10	106,669	59,179
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11	107,782	132,781
		<u>481,360</u>	<u>352,757</u>
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	12	865,984	575,638
Ոչ նյութական ակտիվներ		42,563	41,992
Հետաձգված հարկային ակտիվ	13	23,310	20,556
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների			
ձեռքբերման գծով		17,025	94,279
Բանկային ավանդներ		-	151,356
		<u>948,882</u>	<u>883,821</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		<u>1,430,242</u>	<u>1,236,578</u>
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	822,417	310,636
Վարկեր	15	49,178	69,476
Եկամուտների վերաբերող շնորհներ		1,340	2,169
Շահութահարկի գծով պարտավորություն		21,216	104,050
		<u>894,151</u>	<u>486,331</u>
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	15	68,278	43,455
Փաստաթղթային ակրեդիտիվ	15	91,076	-
Ակտիվների վերաբերող շնորհներ		369	-
		<u>159,723</u>	<u>43,455</u>
Ընդամենը պարտավորություններ		<u>1,053,874</u>	<u>529,786</u>
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ		108,599	108,599
Կուտակված շահույթ		267,769	598,193
Ընդամենը սեփական կապիտալ		<u>376,368</u>	<u>706,792</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		<u>1,430,242</u>	<u>1,236,578</u>

«Արինտերվ» ՓԲԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2022թ. հազ.դրամ	2021թ. հազ.դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բժշկական ծառայությունների դիմաց ստացված դրամական միջոցներ	2,505,718	2,614,962
Դեղերի վաճառքից մուտքեր	201,186	173,557
Ստացված տոկոսներ	487	1,053
Այլ մուտքեր	488	-
	<u>2,707,879</u>	<u>2,789,572</u>
Դեղերի, նյութերի ձեռքբերման գծով վճարումներ	(464,311)	(532,857)
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով վճարումներ	(470,293)	(495,472)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(845,126)	(884,298)
Վճարված շահութահարկ	(154,236)	(38,897)
Վճարումներ այլ հարկերի և պարտադիր վճարների գծով	(291,556)	(35,172)
Անհատույց տրված ակտիվներ	(2,337)	(393)
Այլ ելքեր	(18,960)	(37,219)
	<u>(2,246,819)</u>	<u>(2,024,308)</u>
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	461,060	765,264
<i>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</i>		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով ելքեր	(266,419)	(284,088)
Ավանդների մարում/(ներդրում), զուտ	50,000	(210,000)
Ավանդի տոկոսների ստացումից մուտքեր	7,664	-
Փոխառությունների մարում/(տրամադրում), զուտ	990	(1,500)
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	<i>(207,765)</i>	<i>(495,588)</i>
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր (ծնթ.16)</i>		
Վարկերի ստացում	19,373	26,348
Վարկերի մարում	(78,988)	(69,855)
Տոկոսների մարում	(6,896)	(10,952)
Շահաբաժինների վճարումներ	(150,921)	(204,330)
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	<i>(217,432)</i>	<i>(258,789)</i>
<i>Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	<i>35,863</i>	<i>10,887</i>
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	(448)	75
Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ	56,543	45,581
Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ	91,958	56,543

«Արիևտերլև» ՓԲԸ
 Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Կուտակված շահույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
31 դեկտեմբերի 2021	108,599	598,193	706,792
Շահույթ	-	280,090	280,090
Շահաբաժիններ	-	(610,514)	(610,514)
31 դեկտեմբերի 2022	108,599	267,769	376,368

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Կուտակված շահույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
31 դեկտեմբերի 2020	108,599	200,203	308,802
Շահույթ	-	598,193	598,193
Շահաբաժիններ	-	(200,203)	(200,203)
31 դեկտեմբերի 2021	108,599	598,193	706,792

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկություններ.....	11
2. Պատրաստման հիմունքներ	13
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ.....	14
4. Ֆինանսական գործիքներ.....	15
5. Հասույթ.....	19
6. Ծախսեր ըստ բնույթի.....	20
7. Շահութահարկի գծով ծախս	21
8. Դրամական միջոցներ	21
9. Բանկային ավանդներ	22
10. Պաշարներ.....	22
11. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր.....	22
12. Հիմնական միջոցներ.....	23
13. Հետաձգված հարկային ակտիվներ	24
14. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	26
15. Վարկեր և փաստաթղթային ակրեդիտիվ	26
16. Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում	28
17. Պայմանական դեպքեր.....	28
18. Գործարքներ կապակցված կողմերի հետ	29
19. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր.....	30
20. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը	31

«Արինտերլ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Ընդհանուր տեղեկություններ

«Արինտերլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Ընկերություն) հիմնադրվել է 2003թ. հոկտեմբերին, 2023թ. հուլիս ամսին վերակազմակերպվել է փակ բաժնետիրական ընկերության:

Ընկերությունը նորարարական բժշկության կենտրոն է՝ հայտնի որպես «Վարդանանց բժշկական կենտրոն», որտեղ տրամադրում են հոսպիտալացում չպահանջող բժշկական բոլոր ծառայությունները ապահովագրական ընկերությունների շահառուներին, պետական տարբեր ծրագրերում ընդգրկված շահառուներին, ինչպես նաև պացիենտներին, ովքեր բուժվում են իրենց միջոցներով:

Ընկերությունը իր գործունեությունը ծավալում է հետևյալ լիցենզիաներով.

Լիցենզիայի համար	Նպատակ	Տրամադրող	Տրամադրման ամսաթիվ	Ժամկետ
Կ-ԲՕ-001813	Ստոմատոլոգիական ծառայությունների մատուցում	ՀՀ Առողջապահության նախարարություն	05.04.2013թ.	անժամկետ
Կ-ԴԳ-001728	Դեղատնային գործունեություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	11.04.2014թ.	անժամկետ
Կ-ԲՕ-002356	Մանկական ներգատաբանական, անեսթեզիոլոգիական ծառայությունների մատուցում	ՀՀ Առողջապահության նախարարություն	19.12.2017թ.	անժամկետ
Կ-ԲՕ-002357	Ներգատաբանական և նյարդաբանական ծառայությունների մատուցում	ՀՀ Առողջապահության նախարարություն	19.12.2017թ.	անժամկետ
Կ-ԲՕ-002521	Ճառագայթային ախտորոշիչ ծառայությունների մատուցում	ՀՀ Առողջապահության նախարարություն	07.03.2019	անժամկետ
Կ-ԲՕ-002536	Բժշկական ընդհանուր պրակտիկա	ՀՀ Առողջապահության նախարարություն	18.04.2019	անժամկետ
4157055	ISO 9001:2015 / Service codes according to NACE listing – 8621, 8622, 8623, 8690	Quay Audit/ UK/	11.09.2020	11.09.2023
Կ-ԲՕ-002789	Ուռուցքաբանական, վերակենդանացման, պալիատիվ և վերարտադրողաբանական ծառայություններ	ՀՀ Առողջապահության նախարարություն	06.11.2020թ.	անժամկետ
Կ-ԲՕ-002932	Բժշկական ընդհանուր պրակտիկա, Ֆունկցիոնալ ախտորոշիչ, լաբորատոր ախտորոշիչ ծառայությունների մատուցում	ՀՀ Առողջապահության նախարարություն	23.06.2021թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003023	Շարժական անընկալունաբանական ծառայությունների մատուցում	ՀՀ Առողջապահության նախարարություն	09.09.2021թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003064	Լաբորատոր-ախտորոշիչ շարժական նմուշառման ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	26.10.2021թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003128	Բժշկական ընդհանուր պրակտիկա, ֆունկցիոնալ ախտորոշիչ, լաբորատոր-ախտորոշիչ ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	21.01.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003169	Ճառագայթային ախտորոշիչ համակարգչային տոմոգրաֆիկ ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	21.03.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003185	Ֆիզիոթերապիական ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	06.04.2022թ.	անժամկետ

«Արխիտեքն» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Լիցենզիայի համար	Նպատակ	Տրամադրող	Տրամադրման ամսաթիվ	Ժամկետ
Կ-ԲՕ-003227	Սրտաբանական ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	13.06.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003228	Ճառագայթային ախտորոշիչ ուլտրաձայնային, շարժական ուլտրաձայնային, կլինիկական դեղորայքային ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	13.06.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003245	Մաշկաբանական, մանկական սրտաբանական ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	13.07.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003246	Շարժական ֆունկցիոնալ ախտորոշիչ ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	13.07.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003247	Մանկական ակնաբանական, շարժական ակնաբանական, մանկական շարժական ակնաբանական ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	13.07.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003312	Գինեկոլոգիական ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	04.10.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003358	Լաբորատոր-ախտորոշիչ, վերականգնողական ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	08.12.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003439	Վերականգնողական ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	07.03.2023թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003472	Կլինիկական դեղորայքային, նյարդաբանական, մաշկաբանական, ներզատաբանական, անընկալունաբանական, սրտաբանական, ռևմատոլոգիական, ֆունկցիոնալ ախտորոշիչ, բժշկական ընդհանուր	ՀՀ Առողջապահության նախարարություն	18.05.2023թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003502	Մանկաբուժական ընդհանուր պրատիկա, ընդհանուր վիրաբուժական, քիթ-կոկորդ-ականջաբանական, մանկական քիթ-կոկորդ-ականջաբանական ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	23.06.2023թ.	անժամկետ
ՀԱՕ-546-2013	Գներացնող ճառագայթման աղբյուրների օգտագործում	ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե	20.07.2023թ.	11.04.2028թ.
ՀԱՕ-628-2019	Գներացնող ճառագայթման աղբյուրների օգտագործում	ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե	20.07.2023թ.	24.06.2029թ.
ՖԱԱ-379-2021	Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության ապահովման տեսակետից կարևոր պաշտոններ զբաղեցնող ֆիզիկական անձանց գործունեություն	ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե	20.07.2023թ.	27.12.2031թ.

Ընկերության գործող կանոնադրությունը գրանցվել է 10.07.2023թ. ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից (գրանցման համար՝ 286.120.1328990, վկայական՝ 03 Ա 062168):

2022թ. Ընկերության աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 265 անձ (2021թ.՝ 223 անձ):

2022թ. Ընկերության մասնակիցներն են եղել Նորայր Ալթունյանը և Մարիա Մելիքսեթյանը՝ համապատասխանաբար 55% և 45% բաժնեմասնակցությամբ: 2023թ. օգոստոսի 2-ի դրությամբ ընկերության բաժնետերերի ցանկը հետևյալն է.

«Արինտերն» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Լիցենզիայի համար	Նպատակ	Տրամադրող	Տրամադրման ամսաթիվ	Ժամկետ
Կ-ԲՕ-003227	Սրտաբանական ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	13.06.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003228	Ճառագայթային ախտորոշիչ ուլտրաձայնային, շարժական ուլտրաձայնային, կլինիկական դեղորայքային ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	13.06.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003245	Մաշկաբանական, մանկական սրտաբանական ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	13.07.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003246	Շարժական ֆունկցիոնալ ախտորոշիչ ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	13.07.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003247	Մանկական ակնաբանական, շարժական ակնաբանական, մանկական շարժական ակնաբանական ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	13.07.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003312	Գինեկոլոգիական ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	04.10.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003358	Լաբորատոր-ախտորոշիչ, վերականգնողական ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	08.12.2022թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003439	Վերականգնողական ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	07.03.2023թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003472	Կլինիկական դեղորայքային, նյարդաբանական, մաշկաբանական, ներզատարանական, անընկալունաբանական, սրտաբանական, ռևմատոլոգիական, ֆունկցիոնալ ախտորոշիչ, բժշկական րնդհանուր	ՀՀ Առողջապահության նախարարություն	18.05.2023թ.	անժամկետ
Կ-ԲՕ-003502	Մանկաբուժական ընդհանուր պրատիկա, ընդհանուր վիրաբուժական, քիթ-կոկորդ-ականջաբանական, մանկական քիթ-կոկորդ-ականջաբանական ծառայություն	ՀՀ Առողջապահության նախարարություն	23.06.2023թ.	անժամկետ
ՃԱՕ-546-2013	Գեներացնող ճառագայթման աղբյուրների օգտագործում	ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե	20.07.2023թ.	11.04.2028թ.
ՃԱՕ-628-2019	Գեներացնող ճառագայթման աղբյուրների օգտագործում	ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե	20.07.2023թ.	24.06.2029թ.
ՖԱԼ-379-2021	Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության ապահովման տեսակետից կարևոր պաշտոններ զբաղեցնող ֆիզիկական անձանց գործունեություն	ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե	20.07.2023թ.	27.12.2031թ.

Ընկերության գործող կանոնադրությունը գրանցվել է 10.07.2023թ. ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից (գրանցման համար՝ 286.120.1328990, վկայական՝ 03 Ա 062168):

2022թ. Ընկերության աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 265 անձ (2021թ.՝ 223 անձ):

2022թ. Ընկերության մասնակիցներն են եղել Նորայր Ալթունյանը և Մարիա Մելիքսեթյանը՝ համապատասխանաբար 55% և 45% բաժնեմասնակցությամբ: 2023թ. օգոստոսի 2-ի դրությամբ ընկերության բաժնետերերի ցանկը հետևյալն է.

«Արիևտերի» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Ինթելիջենթ Մենեջմենթ ՍՊԸ – 85.7%

Նորայր Ալթունյան – 11.76%

Մասիս Վարդանյան – 1.27%

Տիգրան Փինաջյան - 1.27%

Ընկերությունը գործունեություն է ծավալում Երևանում՝ Վարդանանց 18/1, Հրաչյա Քոչար 35/1, Դեմիրճյան 38 հասցեներում, Վանաձորում՝ Թատերական 2 հասցեում և Սևանում՝ Նաիրյան փող. 169 հասցեում:

Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Հայաստանի Հանրապետության քաղաքական դաշտը բնութագրվում է որպես անկայուն, մասնավորապես՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի, ընդդեմ Արցախի հանրապետության, սանձազերծած պատերազմից հետո: Քաղաքական և տնտեսական ճգնաժամերի էական նախադրյալները իրենց հերթին բերում են ներդրողների ընդհանուր տրամադրվածության նվազման և ֆինանսական շուկաներում անորոշությունների և տատանումների ավելացման:

ՀՀ տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի նաև Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, քանի որ Ռուսաստանի Դաշնությունից դեպի ՀՀ տեղի են ունենում դրամական միջոցների զգալի հոսքեր: Հետևաբար տարածաշրջանում պահպանվող քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի անկայունությունը, սուր գնաճը և ՌԴ առջև ծառայած այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ ՀՀ տնտեսության վրա:

Այսպիսի գործարար միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ, ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից, Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

COVID-19: 2020թ. մարտին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը COVID-19-ի համաճարակը որակեց որպես համաշխարհային համավարակ: Ի պատասխան համավարակի՝ ՀՀ իշխանությունների կողմից ձեռնարկվել են COVID-19-ի տարածման և ազդեցության զսպմանն ուղղված մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ ճանապարհորդության արգելքները և սահմանափակումները, կարանտինը, ինքնամեկուսացումը, գործարար գործունեության սահմանափակումները: Վերոնշյալ միջոցառումների մի մասը հետագայում մեղմացվել է, իսկ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանափակումներ գրեթե չկային: Սակայն կար ռիսկ, որ կարող են լրացուցիչ սահմանափակումներ կիրառվել հետագա ժամանակաշրջաններում՝ վիրուսի նոր տեսակների ի հայտ գալով պայմանավորված:

Ներկայիս տնտեսական իրավիճակի հետագա հետևանքները և Կառավարության ձեռնարկվելիք միջոցառումները դժվար է կանխատեսել, և Ընկերության ղեկավարության ներկայիս ակնկալիքները և գնահատականները կարող են տարբերվել փաստացի արդյունքներից:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՓՄԿ-ների ՖՀՄՄ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 20-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության ֆունկցիոնալ արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններին կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիման վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Առկա չեն ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ի փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել 2022 թվականի հունվարի 1-ից:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Գնահատումներ և ենթադրություններ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ – ծեթ. 20

Ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերջինիս օգտագործման ժամկետի գնահատումն է (ի տարբերություն դրա գոյատևման ժամկետի): Հիմնական միջոցների միավորների օգտակար ծառայության ժամկետների գնահատումը դատողության հարց է, որը հիմնված է նման ակտիվների փորձի վրա: Ղեկավարությունը գնահատում է մնացած օգտակար ծառայության ժամկետները ըստ

ակտիվների ընթացիկ տեխնիկական վիճակի և գնահատված ժամանակահատվածի, որի ընթացքում ակնկալվում է, որ ակտիվները կազմակերպության համար տնտեսական օգուտներ կբերեն: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են լինել էականորեն տարբեր:

Առևտրային դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության կորուստ

Դեբիտորական պարտքի անհավաքագրելիության կորստի դրույքները որոշվել են՝ հաշվի առնելով Ընկերության նախորդ տարիների կորստի վիճակագրությունը և հաճախորդների վրա ազդող ընթացիկ և ակնկալվող մակրոտնտեսական ցուցանիշները: Առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են՝ ըստ նմանատիպ առևտրային պարտքերին բնորոշ ռիսկայնության:

Պաշարների իրացման գուտ արժեքը

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է՝ արդյոք պաշարների գուտ իրացման արժեքը պակաս է դրանց ինքնարժեքից, և նման հանգամանքներում պաշարների ինքնարժեքը նվազեցնում է մինչև իրացման գուտ արժեք: Գնահատումները հիմնված են հաշվետու ամսաթվից հետո առկա հանգամանքների ուսումնասիրության վրա, ինչպես նաև մոտ ապագայում շուկայում սպասվող փոփոխությունների վերաբերյալ Ընկերության ղեկավարության սպասումների վրա:

4. Ֆինանսական գործիքներ

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

Պարտքային ռիսկ

- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժույթային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ:

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված՝ նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Դրամական միջոցներ,
- Ավանդներ
- Տրված փոխառություններ
- Վարկեր
- Առևտրային կրեդիտորական պարտքեր:

«Արհեստըլ» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(բ) Ֆինանսական գործիքներն ըստ կատեգորիաների

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

Ֆինանսական ակտիվներ

	Անորոշագցված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	
	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Բանկային ավանդներ	174,073	212,053
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	106,966	128,927
Դրամական միջոցներ	91,958	56,543
Տրված փոխառություններ	878	43,557
	373,875	441,080

Ֆինանսական պարտավորություններ

	Անորոշագցված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	
	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Վարկեր	117,456	112,931
Փաստաթղթային ակրեդիտիվ	91,076	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	171,824	109,603
	380,356	222,534

(գ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ավանդներ, առևտրային դեբիտորական պարտքեր, առևտրային կրեդիտորական պարտքեր, տրված փոխառություններ, ինչպես նաև ստացված վարկեր և ակրեդիտիվ:

Թվարկված ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության Ղեկավարությունն ընդհանուր պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման նպատակների և քաղաքականության որոշման համար, իրավասու է պլանավորել և իրականացնել նպատակների ու քաղաքականության արդյունավետ իրագործման գործընթացներ:

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ֆինանսական գործիքների հետ կապված ռիսկերը՝ չանդրադառնալով Ընկերության գործունեության անընդահատության և արդյունավետության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ:

«Արիևտերն» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է ապահովագրական ընկերությունների միջոցով մատուցվող ծառայություններից:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև բանկերում պահվող դրամական միջոցներից և դրանց համարժեքներից: Վերջիններիս դեպքում ընդունելի են միայն բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատությունները:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի վերաբերյալ հետագա բացահայտումները ներկայացված են Ծանոթագրություն 11-ում:

Դրամական միջոցներ և ավանդներ բանկերում

Դրամական միջոցների և ավանդների բաշխվածությունը ՀՀ վստահելի բանկերում հետևյալն է՝

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Բանկ Ա	127,550	71,394
Բանկ Բ	91,202	138,355
Բանկ Գ	32,291	34,621
Այլ	10,375	7,220
	261,418	251,590

Ընկերության գլխավոր հաշվապահը կանոնավոր կերպով ստուգում է բանկերի վարկանիշները: Հաշվետու ամսաթվի դրությամբ գործընկերների պարտականությունների չկատարման հետևանքով առաջացող վնասներ չեն ակնկալվում:

Շուկայական ռիսկ

